ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«25» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0065-21

Ձեռնարկողը՝ **«ԴԱԼՄԱ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ**
քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 26/1

Գործունեությունը՝ ***Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 3 հասցեում «Դալմա Գարդեն Մոլ» զվարճա-առևտրային համալիրի կցակառույցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0065-21

<<25>> 03 2021թ.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 3 հասցեում «Դալմա Գարդեն Մոլ» զվարճա-առևտրային համալիրի կցակառույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԴԱԼՄԱ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 3 հասցեում «ԴԱԼՄԱ ԻՆՎԵՍՏ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է ընդլայնել առկա «Դալմա Գրադեն Մոլ» զվարճա-առևտևային համալիրը՝ կից կառուցելով նոր մասնաշենք:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Կառուցապատման տարածքը՝ «Դալմա Գարդեն Մոլ»-ի հարավ-արևմտյան կողմից Մոլին կից հատվածն է:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ կցակառույցը, որի կառուցապատման մակերեսը կազմում է 6595մ^2, կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 11.9147հա ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ խառը կառուցապատման:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի բարձունքի հարավ-արևելյան եզրամասում և իրենից ներկայացնում է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք թեք դելյուվիալ լանջ, որը քաղաքաշինական

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
РА ЕРЕВАН ГОРОДСКОЙ ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
RA YEREVAN ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

աշխատանքների հետևանքով մասամբ ենթարկվել է հարթեցման: Տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակերևույթից 1001-1011մ սահմաններում:

Տեղամասում մինչև 39մ խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Գործունեության արդյունքում նախատեսվում է քանդել տարածքում առկա ավտոլվացման կառույցը և ջրի ռեզերվուարները (220մ^2), ինչպես նաև գոյություն ունեցող առևտրային համալիրի հետևի շքամուտքը:

Գոյություն ունեցող և նախատեսվող կառույցների միջանցքների անընդհատությունն ապահովելու նպատակով կքանդվի նաև գոյություն ունեցող կառույցի 1 աստիճանավանդակ՝ այն նախատեսելով կից մասնաշենքում՝ պահպանելով նորմատիվ բոլոր պահանջները: Նախատեսվում է քանդել և տեղափոխել 1 արտաքին ե/բ աստիճանավանդակ:

Շինարարության ընթացքում նախատեսված է ժամանակավոր հետիոտնային անցման ապահովում՝ գոյություն ունեցող շենքի բնականոն սպասարկման, ինչպես նաև շենքից էվակուացիա իրականացնելու նպատակով:

Ըստ ներկայացված հայտի կցակառույցը նախատեսվում է իրականացնել 2 վերգետնյա և 1 կիսանկուղային հարկերով: Հարկերի հատակների նիշերը համապատասխանեցվել են առկա համալիրի հատակի նիշերի հետ:

Համաձայն հայտի կցակառույցի առաջին հարկում նախատեսվում են առևտրային տարածքներ, իսկ երկրորդ հարկում՝ սննդի ընդունման տարածք, ժամանցի գոտի և կինոթատրոն, ինչը կհանդիսանա ներկայումս գոյություն ունեցող կինոթատրոնի ընդլայնումը ևս երկու դահլիճով: Սննդի ընդունման տարածքին կից նախատեսված է բաց հարթակ՝ տարվա տաք շրջանին բացօթյա սնունդ կազմակերպելու համար:

Կիսանկուղային հարկում նախատեսվում է 147 կայանատեղով ավտոկայանատեղի և ադմինիստրատրիվ-գրասենյակային տարածք, որը միջանցքով կապվելու է գոյություն ունեցող ադմինիստրատիվ հատվածի հետ:

Հարկերն իրար հետ կապվելու են աստիճանավանդակներով, վերելակներով և շարժասանդուղքներով: Տարհանման պահանջներից ելնելով երկայնական ճակատին կից նախատեսված են ևս 3 բացօթյա աստիճանավանդակներ: Տանիքը հարթ է, ջրահեռացումը՝ ներքին:

Կցակառույցի ճակատները որոշ հեռավորության վրա նախատեսվում է երեսպատել տարածական թաղանթով, որը կազմված է լինելու մետաղական հիմնակմախքից և կոմպոզիտ՝ տեղ-տեղ լուսավորվող պանելներից:

Նախատեսվում է նաև բացօթյա ավտոկայանատեղի՝ 254 ավտոկայանատեղիով:

Աշխատանքային նախագծով մասնաշենքում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, տեսահսկման համակարգ, ինչի օգնությամբ կիրականացվի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգ և այլն:

Նախատեսվող կցակառույցի ջրամատակարարման ու ջրահեռացման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները:

Իրականացվել է սառը և տաք ջրամատակարարման նախագիծ, որի համաձայն ջրամատակարարման խողովակները մուտք են գործում նկուղային հարկից: Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել կաթսայատանից:

Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսվում է ինքնահոս, պոլիվենիլքլորիդե խողովակներով: Հասարակական խոհանոցներից ջրահեռացումն նախատեսված է

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

իրականացնել առաստաղային տարբերակով, ապա հավաքել ընդհանուր կանգնակներով և հեռացնել դեպի ընդհանուր կոյուղային ցանց:

Անձրևաջրերի հեռացումը նախատեսվում է կազմակերպել ջրընդունիչ հոսակների միջոցով, առանձին ջրահեռացման կանգնակներով իջեցնել նկուղային հարկ և ապա հեռացնել քաղաքային ցանց:

Ավտոհանգրվանների ջրահեռացումը ևս իրականացվելու է անձրևաջրերի հեռացման համակարգի միջոցով, ընդհանուր պոլիվենիլքլորիդե խողովակներով: Ջրահեռացման բոլոր խողովակները մեկուսացվելու են:

Կցակառույցի որպես ջերմության աղբյուր հանդիսանում է «Դալմա Գրադեն Մոլ» առևտևային համալիրի առկա շենքի համար գոյություն ունեցող կաթսայատունը՝ համալրված երկու ջրատաքացուցիչ կաթսաներով:

Օդափոխությունը նախատեսված է և իրականացվելու է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխությամբ: Բոլոր տարածքներում և ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման համակարգերի սարքավորումները տեղադրված են տանիքի վրա: Արտածման համակարգերի սարքավորումների որոշ մասը նախատեսված է առաստաղների տակ, իսկ որոշ մասն էլ՝ տանիքում:

Ավտոկայանատեղիների ծխահեռացումը կատարվելու է շիթային օդամուղներով, որոնք օդի հոսքը մղելու են դեպի ծխահեռացման հորան, որի վերևում տեղադրվելու է տանիքային ծխահեռացման օդամուղ:

Հակահրդեհային համակարգերի գործարկումը կատարվելու է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության տևողությունը ծրագրավորվում է 3 տարի:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 150 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 5 մարդ:
- արհեստագործներ, բանվորներ, մեքենավարներ և օգնականներ՝ 145 մարդ:

Աշխատողների կենցաղային պայմանները ապահովելու համար կտեղադրվեն բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտովերամբարձ կռունկ, բետոնամղիչ ավտոմոբիլ, ինքնաթափ ավտոմոբիլ, էքսկավատոր և այլն:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրավորվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է՝ 1815տ քանակով և կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 9տ:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլերում

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE

առաջացած կենցաղային աղբը Երևան քաղաքը սպասարկող աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շինհրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից: Ընդհանուր ջրապահանջը կկազմի՝ 4460մ^3:

Շինարարական աշխատանքների ընթացքում ընդհանուր հողային հանույթը կազմելու է 53574.45մ^3 է, որից հետլիցքը՝ 13070.25մ^3: Հողային աշխատանքներից առաջացած մնացած գրունտը նախատեսվում է օգտագործել ապագա կառուցապատման համար համահարթեցում իրականացնելու նպատակով:

Քանի որ գործունեության տարածքը լիովին ինտեգրված է գոյություն ունեցող արևտրային համալիրի տարածքին՝ կազմելով նրա բաղկացուցիչ մաս, որի համար կանաչապատման լուծումներն արդեն տրված են, լրացուցիչ կանաչապատման նախագծի հաստատման անհրաժեշտություն չի առաջանում:

Հողաբուսաշերտի հանման, պահպանման և հետագա օգտագործման անհրաժեշտութուն չի առաջանում, քանի որ տարածքի մեծ մասն ասֆալտապատ է, իսկ մնացած մասը «Դալմա Գարդեն Մոլ»-ի առկա կառույցի փոսորակից առաջացած գրունտի տեղափախված հանույթն է:

Համաձայն հայտի, նախատեվող գործունեության տարածքի ոռոգումը մակերեսային է:

Գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են՝ մթնոլորտային օդը, հողը և ջրային ռեսուրսները պահպանել աղտոտումից, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,
- շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- սահմանափակել մեքենաների արագությունը՝ փոշու քանակը նվազեցնելու նպատակով,
- շինհրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում մեքենաների ապահովվում խլացուցիչներով,

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" ՍՊԸ
РА ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ "ЭКОЭКСПЕРТИЗА" ООО
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանց պաշտպանությանը շինգործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից,
- շինհրապարակն կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում,
- վտանգավոր նյութերն ու վառելանյութն պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով հեղուկ նյութերի պահում՝ հատուկ տակդիրների վրա և այլն:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի գումարային գնահատումը շուրջ 7 մլն. ՀՀ դրամ է, որը կազմում է գործունեության ընդհանուր նախահաշվի արժեքի մոտ 1,5%-ը:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի կցակառույցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետարանը, ինչպես նաև այլ գերատեսչություններ: Հայտը լրամշակվել է նաև ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները պայմանավորված են լինելու շինարարական աշխատանքներով, կրելու են ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Սեբաստիայի փող., հ.32 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է.

- առաջնորդվել ՀՀ քաղաքաշինական նորմերով և պահանջներով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտակարգ իրավիճակների, աշխատանքի անվտանգության կանոնն ու նորմերը, արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը,

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՈՍԿՈ

- առաջնորդվել ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին» պահանջով,
- պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին,
- շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԴԱԼՄԱ ԻՆՎԵՍՏ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 3 հասցեում «Դալմա Գարդեն Մոլ» զվարճա-առևտրային համալիրի կցակառույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS